ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ-ԳԼԽԱՎՈՐ ԳԱՆՁԱՊԵՏ

0010, Երևան, Մելիք-Ադամյան փող. 1
Հեռ. (+374 10) 59 52 26

29.03.13 № 3.1/4221-13

Ձեր № _____

Ինֆորմացիայի ազատության կենտրոն
հասարակական կազմակերպության իրավաբան
պարոն Գևորգ Հայրապետյանին
ք. Երևան, Բուզանդի 1/3, 4-րդ հարկ

Հարգելի պարոն Հայրապետյան,

Ի պատասխան Ձեր 20.03.2013թ. N 194-ի 8 գրության և ի կատարումն ՀՀ վարչապետի 22.03.2013թ. N02/13.14/3909-13 հանձնարարականի հայտնում ենք հետևյալը.

ՀՀ պետական բյուջեի <<Աջակցություն քաղաքական կուսակցություններին, հասարակակական կազմակերպություններին և արհմիություններին>> և <<Ծխելու դեմ պայքարի և շրջակա միջավայրի պահպանության պետական ծրագիր>> ծրագրերով նախատեսված գումարները կազմակերպություններին տրամադրվել են տվյալ ծրագրերի հատկացումների գլխավոր կարգադրիչների միջոցով՝ սահմանված ընթացակարգերի շրջանակներում:

ՀԿ-ները մրցութային կարգով կարող են իրականացնել պետական պատվերի այլ ծրագրեր, ընդ որում՝ գործող ընթացակարգերը չեն սահմանում առանձնացված հաշվառում իրականացնել ըստ կազմակերպությունների իրավակազմակերպական տեսակների, ուստի այլ ծրագրերում ՀԿ-ների մասնակցության չափի վերաբերյալ ընդհանրացված տեղեկատվություն չենք կարող ներկայացնել:

Հարկ է նշել նաև, որ կից ներկայացվող տեղեկատվությունը կարող եք ստանալ նաև **e-gov.am** կայքում՝ ինտերակտիվ բյուջեին վերաբերվող մասում:

Միաժամանակ կրկին անգամ հայտնում ենք, որ առավել մանրամասն տեղեկատվություն կարող են տրամադրել ծրագրերն իրականացնող պետական կառավարման մարմինները:

Կից ներկայացվում է տեղեկանք 4 էջ:

Հարգանքով

Ատոմ Ջանջուղազյան/

Ծախսերի ֆինանսավորման վարչության,
առաջատար. մասնագետ Ռուզան Համբարձումյան
հեռ.595-247, Մուտք Կ/8727-13